

**ՊՈՂՈՍ ԿԻԼԻԿԵՑԻՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ
ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ (13-14-ՐԴ ԴԴ.)**

Բանալի բառեր՝ Պողոս Կիլիկեցի, Պողոս Ակներցի, Կիլիկիա, Վայոց ձոր, Գլաձոր, ընծայական, ոսկեդրամ, մանրանկարչություն, զարդանկարչություն:

13-րդ դարի երկրորդ կեսից 14-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը Վայոց ձոր գավառում հատկանշվեց տնտեսական և մշակութային ոլորտների առաջընթացով, աշխարհիկ ու հոգևոր իշխանների սերտ համագործակցությամբ: Օրբելյան և Պռոշյան իշխանների, նաև երկրամասի եպիսկոպոսների ու մետրոպոլիտների անմիջական հովանավորությամբ ու խրախուսմամբ հնարավոր դարձավ մի շարք գրչության կենտրոնների գործունեությունը: Կարևոր իրողություն էր 1282 թ. նշանավոր ուսումնագիտական հաստատության՝ Գլաձորի սկզբնավորումը, որ շուրջ կես դար համահայկական կրթական առաջնակարգ կենտրոն դարձավ: Սյունյաց եպիսկոպոսներից Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Օրբելն ու Ստեփանոս Տարսայիճը հենց այդ համալսարանի սաներ էին: Ներսես Մշեցու հիմնադրած համալսարանը, որի ղեկավարումը 1284 թ. ստանձնեց նրա աշակերտ Եսայի Նչեցին, կարճ ժամանակում մեծ ճանաչում ստացավ, և այդտեղ կրթվելու համար սկսեցին գալ Հայաստանի տարբեր շրջաններից, նաև՝ Կիլիկիայից: Տարաշխարհիկ ուսումնականների համաժամանակյա կեցությունը նույն վայրում հնարավոր դարձրեց տարբեր ավանդույթների համատեղ գոյությունը, ինչի հետևանքով Վայոց ձորում ստեղծված ձեռագրերն աչքի են ընկնում իրենց բազմաբնույթ գեղարվեստական սկզբունքներով:

Կիլիկյան մանրանկարչության ազդեցությունը ինչպես Գլաձորի համալսարանի, այնպես էլ Վայոց ձորի մյուս գրչակենտրոնների ձեռագրերում տեղ է գտել հիմնականում զարդանկարչության մեջ՝ խորանների, անվանաթերթերի և լուսանցքների նկարազարդումներում: Կերպարային տեսարանների համար Վա-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտաշխատող, lusine.matenadaran@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 5 ապրիլի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 26 մայիսի, 2025:

յոց ձորի նկարիչները նախընտրում էին հետևել տեղական մանրանկարչական ավանդույթներին, մշակել էին ուրույն ոճ, հաճախ ներկայանում էին ինքնատիպ հորինվածքներով:

Կրիկիրայից Գլաձոր եկած ուսումնականներից էին Վարդան Կրիկեցին, Մատթեոս Կրիկեցին, Տիրատուր Կրիկեցին: Նրանց շարքում էր նաև շնորհալի գրիչ-մանրանկարիչ Պողոս Կրիկեցին կամ Ակներցին: Հայտնի է, որ Պողոսի պատվերով նշանավոր գրիչ, բանաստեղծ և գիտնական Խաչատուր Կեչառեցին, որ կապ է ունեցել Գլաձորի համալսարանի հետ, գրել է «Թաղէոս և Բարդուղիմէոս առաքյալներին նվիրված գանձը», որտեղ Պողոսը հիշվում է որպես «Բաջ գրչապետ»¹:

Գարեգին Հովսեփյանին, Արամ Ավետիսյանին և Լևոն Խաչերյանին հայտնի են եղել Պողոսի երկու ձեռագրերը միայն՝ ստեղծված Գլաձորում 1313 թ. և 1314 թ., և դրանց հեղինակները հակիրճ են անդրադարձել²: Նորայր արք. Ծովականը Պողոսի ստեղծագործական շրջանը համարել է 1267-1321 թթ.³ Նրան վերագրել ուժ ձեռագիր և կազմել դրանց համառոտ ցանկը⁴: Աստղիկ Գևորգյանն այդ ցանկը լրացրել է՝ Պողոսի ձեռագիր ժառանգությունը նույն ժամանակահատվածում հասցնելով տասնչորսի⁵: Մենք ուսումնասիրել ենք Պողոսին առնչվող ինը ձեռագիր⁶, արել մեր գիտարկումները, որոշակի փաստերից ելնե-

¹ Ժողովածու, ՄՄ 7853, ԽԳ «Գանձ սրբոց առաքելոցն Թաղէոսի եւ Բարդղղիմէի, Յուդայի Յակոբեան եւ Շմատոնի նախանձանոյգ. Ասացեալ ի խնդրո հեգի եւ Բաջ գրչապետի վարդապետ Պաւղոսի ի նահանգէն Կիլիկեայ», տե՛ս Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 176-177, 256: Հովսեփյանը ձեռագիրը հիշատակում է Երևանի թանգարանի թվահամարով՝ 37/383:

² Գ. Յովսէփեան, նշվ., աշխ., էջ 177, 265-267, 270, Ա. Ավետիսյան, *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը*, Երևան, 1971, էջ 80-83, Լ. Խաչերյան, *Նալիկ Նեյցին և Գլաձորի համալսարանը (1280-1340 թթ.)*, Լոս Անջելես, 1988, էջ 209-210, նույնի՝ *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ձեմարանները, ակադեմիաները և համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կրիկիրայում (V-XVI դդ.)*, հ. 2, Լիզպոն, 1998, էջ 75-77, տե՛ս նաև Կ. Մաքսևսյան, «Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները», *ԲՄ*, 36, Երևան, 2023, էջ 25-26, նույնի՝ *Գլաձորի համալսարանի պատմությունից*, Երևան, 2025, էջ 200-201:

³ Ն. արք. Ծովական, «Հայ նկարողներ», *Սրոն*, է-թ, Երուսաղեմ, 1986, էջ 178-179:

⁴ Ա. Գևորգյան, *Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն 9-17-րդ դդ.*, Երևան, 1998, էջ 620-622, նույնի՝ *Վայոց ձորի և Որոտանի մանրանկարչությունը 13-17-րդ դդ.*, Երևան, 2003, էջ 113-125:

⁵ Բացառություն են կազմում հինգ ձեռագիր, որոնցից մի ֆանիսի գտնվելու վայրն այժմ հայտնի չէ կամ էլ անհասանելի է ուսումնասիրության համար: Դրանք նկարագրադրամներն, ըստ ձեռագրացուցակների նկարագրության, հիմնականում պարզունակ են: Այդ ձեռագրերի հիշատակարաններում Պողոս անվան առկայությունը, կարծում ենք, բավարար հիմք չէ դրանք նույն հեղինակին վերագրելու համար, ինչպես ենթադրել է Ա. Գևորգյանը՝ հիմնվելով միայն ձեռագրացուցակների տեղեկությունների վրա: Դրանք նրա կազմած ցանկի 1, 2, 3, 6, 14 ձեռագրերն են, տե՛ս Ա. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 124:

լուվ նրան վերագրել ևս մի ձեռագրի գրչությունն ու մասնակի նկարազարդումը, որոնց մասին կներկայացվի ստորև:

13-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայում՝ մասնավորապես Հովհաննես Արքաեղբոր մանրանկարչական դպրոցում, գրքի գեղարվեստական ձևավորման մեջ ի հայտ է գալիս մի ուղղություն, որ հատկանշվում է պարզ, համեստ ու զսպված հորինվածքներով, ամբողջական էջ զբաղեցնող և բնագրային մանրանկարներն անհետանում են, շեշտվում է զարդանկարչությունը, զուգահեռ տարածում են ստանում միագույն նկարազարդումները⁶:

Պողոսի աշխատանքները հարում են հենց այս ուղղությանը: Կիլիկիայի Հովհաննես անապատում 1278 թ. գրել ու նկարազարդել է մի Ավետարան (ՄՄ 5563), որ պարունակում է ավետարանիչներ Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի անվանաթերթերը (նկ. 1-3)* և մի քանի լուսանցազարդ ու զարդագիր: Դրանցում տեսնում ենք 12-րդ դարից կանոնիկ տեսք ստացած կիլիկյան անվանաթերթերին բնորոշ կառուցվածք: Երեք անվանաթերթում էլ առկա է II-աձև կամ ուղղանկյուն գլխազարդ՝ ձևավոր բացվածքով, իսկ գլխազարդի դաշտը լցված է բուսածաղկային հյուսվածքներով ու պարույրներով: Զարդանախշերի մեծ մասը՝ երեքնուկներ, հնգաթերթ ծաղիկներ, ոճավորված ականթի ժապավեններ, ձևավորվել էին 11-րդ դարի հայկական ձեռագրերում, ապա փոփոխվեցին ու կիրառվեցին նաև կիլիկյան նկարիչների կողմից⁷: Հորինվածքի պարտադիր տարրերից է գլխատառը: Մարկոսի անվանաթերթում Ս գլխատառը կենդանագիր է՝ ավետարանչի խորհրդանիշ առյուծի տեսքով՝ թևավոր, լուսապսակով, գիրք բռնած: Ղուկասի անվանաթերթի Ք գլխատառը զարդագիր-հանգուցագիր է, իսկ Հովհաննեսի Ի գլխատառը անսովոր ձևավորում է ստացել՝ ավետարանչի խորհրդանիշ արծվի փոխարեն ընդունելով սիրամարգի տեսք⁸, որպես Քրիստոսի հարության և անմահության խորհրդանիշ, քանզի Հովհաննեսի Ավետարանում շեշտվում է Քրիստոսի աստվածային էությունը և հավիտենական կյանք

⁶ В. Казарян, С. Манукян, Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, т. I, Москва, 1991, с. 175.

* Նկարները տե՛ս ներդիրում:

⁷ S. Der-Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to Fourteenth Century*, vol. I, Washington, 1993, p. 4.

⁸ Սիրամարգի տեսքով Ի գլխատառ հանդիպում է նաև Մումիկին վերագրվող, տեղն ու ժամանակն անհայտ մի ձեռագրում (Մոսկվա, Ռուսական պետ. գրադ., 439.23.5), նաև եղեգիսի մանրանկարիչ Բարդղիմեի 1315 թ. Ավետարանում (ՄՄ 9721), տե՛ս Ի. Դանիելյան, «Մումիկի մանրանկարչությունը Ռուսաստանի պետական գրադարանի թիվ 439.23.5 ֆոնդի ձեռագիր Ավետարանում», *ՎԷՄ*, 2016, էջ 168, նույնի՝ «Армянское Четвероевангелие из Российской государственной библиотеки (ф. 439.23.5): К вопросу атрибуции миниатюр рукописи», *Актуальные проблемы теории и искусства*, сборник научных статей, VII, СПб, 2017, с. 281-282:

ունենալու հնարավորությունը: Հովհաննեսի Ավետարանի բնագրի առաջին տողերը ոսկեգիր են, ինչն Աստծո և արքայության խորհուրդն ունի: Մինչդեռ Մարկոսի և Ղուկասի Ավետարանների սկզբնատողերը զարդագրերից են կազմված: Այս անվանաթերթերի բաղկացուցիչ մաս է նաև ամբողջ էջի բարձրությունը զբաղեցնող, ընթերցվածի սկիզբը նշող խաչով պսակված աջ լուսանցազարդը, որ բարձրանում է ծաղկամանի կամ անոթի միջից⁹: Պողոսի նկարազարդած անվանաթերթերը ներդաշնակ կառուցվածք ունեն, և դրանցում գերիշխում է կապույտ երանգավորումը՝ ոսկու նրբաճաշակ գործածությամբ: Կիլիկիայում ստեղծված՝ Պողոսին վերագրվող երկու ձեռագրին կանդրադառնանք վայոցձորյան աշխատանքների հետ համեմատության շրջանակում:

Պողոսի՝ Վայոց ձորում լինելու ամենավաղ հիշատակումները վերաբերում են 1307 թ.: Այդ տարի Դավիթ վարժապետի պատվերով նա ընդօրինակել է մի Ավետարան Գլաձորում (Վնտկ. 1917)¹⁰, որ նկարազարդել է Թորոս Տարոնացին, ստացել՝ Եսայի Նչեցին. «ստացալի Սուրբ եւ կենսաբեր Աւետարանիս՝ սուրբ եւ տիէգերալոյս րաբունապետին եւ աստուածախաւս վարդապետին Եսայեայ... եւ աշխատաւղի սորա՝ Պաւղոսի...» (149 ք)¹¹: Հիշատակարանից տեղեկանում ենք Պողոսի օգնական, Եսայի Նչեցու աշակերտ Տիրացուի մասին. «...յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր զմեծ րաբունապետին Եսայի, եւ զհաւազատ աշակերտն՝ զՏիրացու, եւ ծնաւո՛ք նորա, որ ամենայն յաւժար սրտի եւ սիրով սպասաւորեաց սրբոյ Աւետարանիս նկարաւղին եւ գրաւղին...» (293ա)¹²:

Նույն թվականին Պողոսն աշխատել է Մոմիկի հետ Նորավանքում: 1307 թ. Հովհաննես Օրբելի պատվերով գրված Ավետարանում¹³ տասնամյակներ անց՝

⁹ Կիլիկյան ձեռագրերում լուսանցազարդերի ստորին մասը փոխվում է, և դրանք սկսում են հենվել ռճավորված առարկաների և կենդանակերպ ձևերի վրա կամ բարձրանում են անոթների և ծաղկամանների միջից, տե՛ս С. Манукян, «Формирование титульного листа в армянской рукописной книге», *Կրթեր*, 4, 1991, էջ 106-107, նույնի՝ «Киликийские заглавные листы в свете бифункциональности армянского Евангелия», *Հայ արվեստի հարցեր*. գիտական հոդվածների ժողովածու, 3, Երևան, 2010, էջ 211-214, նույնի՝ «Орнамент в системе иллюминирования армянских рукописных Евангелий», *Studia Religiosa Rossica: Russian Journal of Religion*, 3, Москва, 2023, сс. 99-100:

¹⁰ S. Der-Nersessian, *Manuscripts Arméniens illustrés de XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des Pères Mekhitaristes de Venise*, vol. I, Paris, 1937, p. 112.

¹¹ Զ. Քիրտեան, «Դարձեալ Թորոս Տարոնեցի», *Բազմավէպ*, Վեհեաթիկ, 1947, 9-10, էջ 218-219, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժ՛ի դար, մասն Ա, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2018, էջ 135-136, 377 (այսուհետև՝ Հայերեն ձեռագրերի հիշ., Ժ՛ի, Ա.):

¹² Նույն տեղում:

¹³ Յեյլի համալսարան, Բեյնեֆե գրադ., Arm. MSS 3, մինչև 2005 թ.՝ Հարթֆորդ, Քեյս Մեմորիալ գրադ.:

1331 թ., սյունյաց նոր մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճի պատվերով Մոմիկն ավելացրել է գլխավոր հիշատակարանը՝ ներկայացնելով մատյանի ստեղծման պատմությունը, որտեղ նշում է, որ 1307 թ. ինքն ու Պողոս վարդապետը երկու ձեռագիր գրելու հրաման են ստացել Հովհաննես Օրբելից. «...ես՝ Մոմիկ գրիչ եւ Պաւղոս վարդապետն երկու Աւետարան սկսեալ հրամանաւ տէր Օրպէլ Յովանիսի կատարեցաւ...» (299ա)¹⁴: Պողոսն այստեղ հիշատակվում է արդեն որպէս վարդապետ, ինչից կարելի է ենթադրել, որ Եսայի Նեցոց է վարդապետական աստիճան ստացել: Հնդօրինակված երկու ձեռագրերից մյուսը վերը հիշատակված Ավետարանն է:

1310 թ. Պողոսին տեսնում ենք Արատեսում, որտեղ նա Տերունական քահանայի պատվերով գրչագրում է մի Ավետարան (ՄՄ 4446), որի հիշատակարանից պարզ է դառնում, որ Պողոսը տարիքն առած էր արդեն. «Եւ ետուն գրել զսա իմոյ՝ մեղաւ լցեալ հոգոյ՝ Պաւղոսի սոսկանուն վարդապետի... ետու զանձն յաշխատութիւն, եւ [ի] ծերացեալ ժամանակի /// ձեռաւ գրեալ աւարտեցի զսա» (134բ), «...ես նուաստ աշխատաւ սորա՝ Պաւղոս» (135բ)¹⁵: Արատեսի վանքը ևս, 13-րդ դարից սկսած մշակութային կենտրոն է եղել: Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ Արատեսի վանքը հաստատվեց որպէս նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստավայր¹⁶: Ինչպէս Պողոսը, այնպէլ էլ շատ գրիչներ ու մանրանկարիչներ շրջել են վայոցձորյան վանքերով, որոնք ակտիվ կապերի մեջ են եղել իրար հետ, քանի որ հովանավորվել են նույն իշխանական տներին՝ Օրբելյանների և Պռոշյանների կողմից:

Արատեսի ձեռագիրը թերի է (135 թերթ), կազմությունը՝ խախտված, պահպանվել են միայն Մատթէոսի անվանաթերթը (1ա), Դուկասի պատկերը (31բ), նրա տիտղոսաթերթից չնչին մի հատված և որոշ զարդագիր, թռչնագիր տառեր ու լուսանցազարդեր՝ միագույն կամ գունավորված:

Այս ձեռագրին սերտորեն առնչվում է 1315 թ. մի Ավետարան (Վիեն. 460)¹⁷: Այն պարունակում է գրաֆիկական յոթ խորաններ, գունազարդ չորս անվանաթերթեր, Մարկոսի պատկերը և միագույն լուսանցազարդեր ու զարդագ-

¹⁴ *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, by A. Sanjian, Berkeley-Los Angeles-London, 1976, pp. 81-89, Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Ա, էջ 133-134, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան 2020, էջ 100 (այսուհետև՝ Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Բ):

¹⁵ Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Ա, էջ 171-172:

¹⁶ Կ. Մաթևոսյան, «Դրուագներ նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությունից (Արատես եւ Վերին նորավանք)», *Նորավանք, հոգվածների ժողովածու*, Բ, Մոմբեալ-Երևան, 2001, էջ 62:

¹⁷ *Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, կազմեց՝ Վ. Տաշեան, Բ. Ա. Վիեննա, 1895, էջ 934:

րեր¹⁸: Դժվար չէ տեսնել երկու ձեռագրերի ավետարանիչների պատկերներն իրար կապող հատկանիշները՝ դիմագծերը, մագերի միատիպ մշակումը, հագուստի մոդելավորումը, ճարտարապետական ֆոնը: Սակայն դրանց նկարագարումն ունի, ինչպես և անվանաթերթերի ձևավորումը, տարբերվում են Պողոսի աշխատանքներից և աղերսվում Օրբելյաններին պատկանող՝ եղեգիսի գրչության կենտրոնին բնորոշ ոճապատկերագրական հատկանիշներին: Մարկոսի պատկերը ձեռագրում նախապես անջատված թերթ է եղել, 1975 թ. վերականգնման ժամանակ կարվել է ձեռագրին¹⁹: Ձի բացառվում, որ ավետարանիչների այս երկու պատկերները միևնույն ձեռագրից անջատված թերթեր լինեն կամ առնվազն պատկանեն մի հեղինակի, քանզի կրում են նույն միջավայրի ազդեցությունը²⁰: Վիեննայի ձեռագիրը գլխավոր հիշատակարան չունի, սակայն հետագայի հիշատակագրությունից տեղեկանում ենք ձեռագրի թվականի և հետագա ստացողի մասին, համաձայն որի, 1315 թ. Շահի որդի Սարգիսը ձեռագիրը 50 դահեկանով գնել է Պողոս վարդապետից, որը կարծում ենք, մեզ ծանոթ Պողոսն է. «Կատարեցաւ սուրբ Ավետարանս այս ի թվականութեան Հայոց ԶԿԴ (1315): Ես Սարգիս Շահիս որդին, որ ստացայ զսայ ի հալալ արդեանց եւ գնեցի զսայ ի Պողոս վարդապետէ Ծ. (50) դկ (դահեկան)...» (327բ): Այս ձեռագրի և Պողոսի 1313 թ. Ավետարանի (անդրադարձը՝ ստորև) միագույն խորանների, լուսանցազարդերի և գրի համեմատությունը թույլ է տալիս մտածել, որ դրանց հեղինակը նույն Պողոսն է (նկ. 4-5, աղյուսակ 1ա-բ):

1311 թ. Պողոս վարդապետը Եսայի նշեցու հոգևոր զավակ Տիրացուի պատվերով (նույնանում է վերոնշված 1307 թ. հիշատակարանի Տիրացուի հետ) մի ձեռագիր է ընդօրինակում Արատեսից ոչ հեռու գտնվող Հերմոնի վանքում. «Արդ, գրեցաւ ըստ իմում կարի, վատեալ ի լուսոյ եւ պակասեալ ի զաւուրեմէ, հրամանաւ սուրբ երիցս երանեալ նախասարկաւագին՝ Տիրացուին՝ սպասաւորին եւ հոգեւոր որդեկի սուրբ եւ երանաշնորհ րաբունապետի աստուածախաւս եւ տիեզերալոյս վարդապետի Եսայեայ... ձեռամբ յոգնամեղ հոգւոյ Պաւղոսի սոսկանուն վարդապետի»²¹: Հերմոնի վանքը ևս արդյունավոր գրչակենտրոն է եղել, որ գործել է Օրբելյանների հովանու ներքո: Դլաձորի

¹⁸ Շնորհակալություն եմ հայտնում Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Պողոս Գոնանեանին ձեռագրի անհրաժեշտ էջերի թվային տարբերակը մեզ ուղարկելու համար:

¹⁹ Հ. և Հ. Բուչնալզեմ, Հայ ձեռագիրներ Մխիթարեան Մատենադարանի ի վիեննա, Վիեննա, 1978, էջ 29:

²⁰ Ժամանակին այդ պատկերները վերապահությամբ վերագրել եմ Պողոսին, տե՛ս Լ. Բարսեղյան, «Արատեսի և Վերին Նորավանքի գրչության կենտրոնները», ՀԱ, 2013, 1-12, էջ 368-369:

²¹ «Սահմանի Խմաստասիրի Դավթի», Ժողովածու, Ա (ձեռագիրն այժմ կորսված է) տե՛ս, Յուզակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Քարգմանչաց վանքի եւ շրջակայից, կազմեցին՝ Ս. Մուրատեան, Ն. Մարտիրոսեան, խմբ.՝ Ա. Գալաճեան, Երուսաղեմ, 1967, էջ 17, Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Ա, էջ 192-193:

գործունեության դադարումից հետո Տիրատուր Կիլիկեցին 1338 թ. համալսարանը տեղափոխել է Հերմոնի վանք և ղեկավարել այն մինչև 1356 թ.:

1313 թ. Պողոսը կրկին Գլաձորում էր, որտեղ ստեղծում է մի Ավետարան (ՄՄ 7842). «Արդ, ես՝ տկարս ի զաւրեղս եւ ապիկարս ի վարդապետս, չնչինս ի յիմաստս եւ փանափիս ի քերթոսն՝ Պաւղոս վարդապետ, ծրեցի իմով տկարութեամբս զսուրբ Աւետարանս յոլով աշխատանամ եւ քրտնաջան տառապանամ» (335բ)²²: Ձեռագրում համադրվել են գծանկարային ոճով կատարված յոթ խորանները (անկանոն հերթականությամբ), լուսանցազարդերն ու զարդատառերը (բացառությամբ մեկի) և Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ավետարանիչների գեղանկարչական ոճով անվանաթերթերը (նկ. 7-9): Դրանց զարդանկարչությունը հետևում է անվանաթերթերին բնորոշ հայկական մանրանկարչության ավանդական ու տարածված ձևերին: Ղուկասի Ավետարանի տիտղոսաթերթը մայր ձեռագրի մաս չէ և հետագայում է լրացվել: Ձեռագրի ողջ հարդարանքից իրենց կատարման եղանակով և գունային ընտրությամբ ակնհայտորեն առանձնանում են նաև որոշ պարզունակ լուսանցապատկերներ (97բ, 296բ), որոնք իրականացրել է մեկ այլ նկարիչ:

Միայն գծանկարային, հասարակ նկարազարդումներով հայկական ձեռագրեր հանդիպում են դեռևս 10-11-րդ դարերում: Սակայն 13-րդ դարից սկսած Կիլիկիայի և Բարձր Հայքի ձեռագրերում աստիճանաբար ձևավորվում և կայուն համակարգի են վերածվում միագույն զարդային հարդարման սկզբունքները՝ հաճախ զուգորդված գունազարդ էջերի հետ: Արդեն 14-րդ դարի սկզբի հայկական մի շարք ձեռագրերում տարածված հատկանիշ է դառնում գրաֆիկական և գեղանկարչական ձևերի զուգահեռ համադրությունը, որի կազմավորման և տարածման շարժառիթները լիովին պարզաբանված չեն: Ըստ է. Կորխմազյանի՝ նմանօրինակ նկարազարդումը պայմանավորված էր այն հանգամանով, որ Բարձր Հայքում գրված ձեռագրերին՝ հարդարված միայն գրաֆիկական տարրերով, հետագայում ավելացվել են գեղանկարչական եղանակով արված թերթեր: Երբ այդ ձեռագրերը ընդօրինակում էին, նոր ստեղծված մատյանները զարդարում էին այդ երկու նկարեղանակով²³:

Գլաձորի կապը Բարձր Հայքի հետ պատահական չէր, քանի որ հատկապես երգնկայից գալիս էին ուսանելու նպատակով (Հովհաննես, Մխիթար, Կիրակոս երգնկացիներն աշխատել են Գլաձորում): Բարձր Հայքի Ավագ վանքում էր գտնվում Գրիգոր Լուսավորչի դամբարանը, որտեղ ուխտի էին գնում Հայաստա-

²² Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԳ, Ա, էջ 232:

²³ Է. Կորխմազյան, «Բարձր Հայքի XIII դարի վերջի և XIV դարի սկզբի մանրանկարչության առանձնահատկություններ», էջմիածին, 2003, Ը, էջ 94, նույնի՝ Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ-ԺԴ դդ., Երևան, 2015, էջ 57:

նի տարբեր վայրերից, այստեղով էին անցնում ճանապարհները դեպի Կիլիկիա²⁴: Բացի այդ, 14-րդ դարում հատկանշական է դառնում կիլիկյան ձեռագրերի նվիրաբերումը Հայաստանի վանքերին ու հոգևորականներին²⁵: Այդ ձեռագրերին մանրանկարիչները ծանոթանում էին նաև Կիլիկիայում կրթվելու անձնական փորձի միջոցով²⁶: Այս ամենը նպաստում էր մշակութային կենտրոնների փոխկապակցված զարգացմանը, և Գլաձորի նկարիչները հնարավորություն են ստանում ծանոթանալու և կիրառելու նմանօրինակ ձեռագրերի հարդարման համակարգի սկզբունքները: Դրա հետևանքով 14-րդ դարի սկզբում Գլաձորի մանրանկարչության մեջ ի հայտ է գալիս կիլիկյան զարդանկարչության ազդեցությունը:

Պողոսի 1313 թ. Ավետարանի հետ ունեցած ընդհանրություններից ելնելով Ա. Գևորգյանը նրան է վերագրել Կիլիկիայում ստեղծված երկու Ավետարան՝ մեկը 1280 թ. (ՄՄ 4096), մյուսը՝ 13-րդ դար (ՄՄ 4171)²⁷: Այդ ձեռագրերի ուսումնասիրությունն ու համեմատությունը ցույց տվեց, որ դրանց գրչությունը պատկանում է նույն հեղինակին և նույնանում Պողոսի մյուս գրչագրերին (աղյուսակ 1բ): ՄՄ 4171 Ավետարանում պահպանված չորս անվանաթերթերն ու լուսանցազարդերն իրենց ոճով, գունազարդման համակարգով և գեղարվեստական միջոցների ու մոտիվների կիրառմամբ հնարավորություն են տալիս Պողոսին համարել դրանց հեղինակը (նկ. 10-12): ՄՄ 4096 ձեռագրի միագույն գրաֆիկական խորանները ևս շատ մոտ են Պողոսի 1313 թ. ձեռագրի համաձայնության տախտակներին (նկ. 6): Սակայն անվանաթերթերը, չնայած զարդանկարչական որոշակի նմանողության, ակնհայտ տարբերություններ ունեն: Դրանք կատարված են ավելի հմուտ ծաղկողի կողմից. գծանկարն առավել նուրբ է ու հստակ (նկ. 13-15):






Վերոնշյալ ձեռագրերի բնագրում Քրիստոսի՝ խաչից իջեցման և թաղման հատվածը (Հովհ. ԺԹ 38) սկսվում է հիմնականում թռչնագիր 3 գլխատառով (աղյուսակ 1գ): Ուշագրավ է, որ որոշ ձեռագրերում բազում գլխատառերից գունազարդված է միայն հենց այդ մեկը:

²⁴ Ս. Մանուկյան, «Անվանաթերթերը Մովսիկի ծաղկած ձեռագրերում», *Մամիկ 750*. Զեկուցումների ժողովածու, Երևան, 2010, էջ 52, ծանոթ. 8:

²⁵ В. Казарян, С. Манукян, укр., соч., с. 187.

²⁶ S. Der-Nersessian, *The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts*, vol. I, Dublin, 1958, p. xxix.

²⁷ Ա. Գևորգյան, նշվ., աշխ., էջ 116, 119:

	ՄՄ 5563 1278թ., Ավ.	ՄՄ 4096 1280թ., Ավ.	ՄՄ 4171 ԺԳ դար, Ավ.	ՄՄ 7842 1313թ., Ավ.	Վիեն. 460 1315թ., Ավ.
ա					
	ՄՄ 5563 1278թ., Ավ.	ՄՄ 4096 1280թ., Ավ.	ՄՄ 4171 ԺԳ դար, Ավ.	ՄՄ 4446 1310թ., Ավ.	ՄՄ 7842 1313թ., Ավ.
բ					
գ					

Ա. Գևորգյանը Պողոսին է վերագրել ժամանակին ու տեղին անհայտ մեկ այլ ձեռագիր *ևս*²⁸։ Ձեռագրի որոշ էջեր ունեն միագույն պարզ գրաֆիկական զարդանկարներ։ Ձեռագրի գրիչը Պողոսն է, ստացողը՝ Հովհաննեսը։ Լ. Խաչիկյանը հիշատակված Հովհաննես պատվիրատուին նույնացրել է Հովհաննես Որոտնեցուն և հիշատակարանը դրել 1386 թ. տակ²⁹։ Ա. Գևորգյանը հավանական է համարում ձեռագրի ստեղծումը Հովհաննես Օրբելի պատվերով՝ 1307-1310 թթ. միջև³⁰։ Սակայն քննությունն առնելով Հովհաննես Օրբելին առնչվող շուրջ տասնհինգ ձեռագիր, որոնցում նա հիշվում է որպես գրիչ, պատվիրատու կամ երկրամասի հոգևոր առաջնորդ, տեսնում ենք, որ դրանց հիշատակարաններում մշտապես շեշտվում է Հովհաննեսի՝ մետրոպոլիտ կամ Օրբելի (Օրբելյաններից սերված) լինելու հանգամանքը։ Օրինակ, վերը հիշատակված 1310 թ. ձեռագրում Պողոսը գրում է. «...ի վերադիտողութեան...տեսուն Յովանիսի մականուն Ուրպելի՝ արհիական եպիսկոպոսի...»³¹։ Մինչդեռ անթվակիր այս ձեռագրում Հովհաննեսը հիշվում է «գերանաշնորհ րաբունապետ» (58ա, 276բ), «զտիեզերալոյս վարդապետն» (105բ) մակդիրներով, ինչը կասկածի տակ է դնում նրան Հովհաննես Օրբելի հետ նույնացնելը և հետևաբար, այս ձեռագիրը Պողոսին վերագրելը։

1314 թ. դարձյալ Գլաձորում Ստեփանոս Տարսայիճ Օրբելյանը Պողոսին պատվիրում է մի Ավետարան, որից պահպանվել է միայն ստացողին նվիրված ընծայագիրը՝ ամփոփված երկու խորանների մեջ և հիշատակարանը (ՄՄ 9150)³²։ Գլխավոր հիշատակարանից տեղեկանում ենք, որ Պողոսը Կիլիկիայի Ակներ վանքից հատուկ եկել է Գլաձոր՝ ուսանելու և հմտանալու եսայի Նեցու մոտ։ Պողոսն արդեն բավականին ծեր էր, քանի որ խոստովանում է տկարացած աչքերի և դողդոջուն ձեռքերի մասին. «...ես Պաղոս, ըստ շնորհատուր անուանն սոսկ վարդապետ կոչեցեալ, աշխարհաւ Կիլիկեցի, ի սուրբ ուխտէն Ակներ կոչեցեալ, ըստ տատանման մտաց արդարեւ հողմով մ[ա]նգութեան

²⁸ ՄՄ 185, Մատնիմ Հնոց կտակարանի (բաղ. 2 ձեռագրից), ԺԳ դար, տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեթունյան, Փ. Անթապյան, Երևան, 1984, էջ 767-768:

²⁹ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 55:

³⁰ Ա. Գևորգյան, նշվ., աշխ., էջ 122-123:

³¹ Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Ա, էջ 171:

³² Ձեռագրից պահպանված այդ պատառիկները ժամանակին վարդապետ Խաչիկ Դադյանի սեփականությունն են եղել, տե՛ս 3. Թօփեան, Յուցակ Ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, Վաղարշապատ, 1900, մասն Բ, էջ 29-30: Գլխավոր հիշատակարանին, որի հեղինակը Պողոսն է, հաջորդում է Հակոբ Թագորցու չափածո հիշատակարանը (7ա-բ, 8ա)՝ նվիրված ձեռագրի պատվիրատու Ստեփանոսի ուսուցիչ Սարգիս րաբունուն, որի սկզբնատառերը մեկընդմեջ կազմում են «Տէր Սարգիս է Աւետարանս» գրությունը, տե՛ս նույն տեղում, նաև Հայերեն ձեռագրերի. հիշ., ԺԴ, Ա, էջ 253-254:

խմոյ, նաեւ յաղագս փափագման իմաստասիրական արհեստից տարաշխա[r]նիկ եղեալ ի կայս...եկեալ բնակեցայ...ի վանս Գլաձոր, առ ոտս սուրբ երիցս երանեալ ռաբունապետին Եսայեայ...գրեցի զսուրբ Աւետարանս իմով ձեռամբ, վատեալ ի լուսոյ եւ պակասեալ ի զարութենէ, դողդոջեալ ձեռամբ եւ մտամբ...» (3բ-4ա)³³: Վկայություններ կան նաեւ Ստեփանոս Տարսալիճի՝ Գլաձորի համալսարանում ուսանելու մասին, 1314 թ. նա արդեն քահանա էր և պատրաստովում էր վարդապետական և եպիսկոպոսական պատիվ ու աստիճան ստանալ Եսայի Նչեցուց³⁴:

Ընծայականը զբաղեցնում է հանդիպադիր երկու էջ՝ խորանի ձևավորում ստացած սյունազարդ շրջանակների մեջ (նկ. 16): Այն գրված է ոսկե խորքի վրա կապույտ երկաթագրով՝ կարմիր տողերի արանքում.

1բ Ով յանսկիզբն ծոցոյ բան,
Նոյնդ ծաղկեալ յազգ մարդկան
Որ գայսմ ատենն Աւետարան,
Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան,
Ահա գոյս առել քեզ տամ,
Բարձեալ ի ձեռ առաջի գամ.//
2ա Առ գայս նուէրս բարէխնամբ
Եւ յիս հայեա՝ Տէր հաշտ ակամբ
Դու զպննողս քո բանի,
Եւ զստացող այսմ տառի՝
Զտէր Ստ[ե]փանո[ս հո]վի բարի, հայրենի³⁵:

Ընծայականի ուղղանկյուն գլխազարդերից յուրաքանչյուրի կենտրոնում գետեղված է քառաթերթ բացվածքի մեջ առված ոսկեդրամ, իսկ մնացած դաշտը լցված է երեքնուկների, արմավազարդերի և ոլորապտույտ ցողունների համակցված նախշով: Գլխազարդերի վրա բացված պոչով մեկական սիրամարգ է, իսկ սյուների կողքին բարձրանում է ծառ՝ վրան նստած թռչունով: Այն, որ ընծայագիր-խորանը նկարազարդել է Պողոսը, վկայված է հիշատակարանում. «...գրեցաւ սուրբ Աւետարանս յընդիր ընդիր երանգոց եւ ի յուկոյ սրբոյ...» (5ա), «...ըստ կարի իմում մեծաւ աշխատութեամբ...գրեցի զսա եւ ընծայեցի իբր զակն անգին եւ պատուական...» (6բ)³⁶:

³³ Նույն տեղում, էջ 251:

³⁴ Գ. Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 441, 450, նույնի՝ Տարսալիճ Օրբէլեանի եւ Մինա Խաթունի սերունդը, Անթիլիաս-Լիբանան, 1947, էջ 15:

³⁵ Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Ա, էջ 254:

³⁶ Նույն տեղում, էջ 252:

Ընծայագիր-խորանի՝ Գլածորում ստեղծված առաջին օրինակը հանդիպում է վերը հիշված 1307 թ. Եսայի Նչեցու Ավետարանում (Վնտկ. 1917, 12ա), որի գրիչը Պողոսն է: Ընծայականն այստեղ զբաղեցնում է մեկ էջ և որոշակի տարբերակիչ գծերով հանդերձ՝ ունի գրեթե նույն կառուցվածքը (նկ. 17)³⁷: Զարդարուն գլխազարդը հենվում է սյուների վրա, որոնց վրա տեղադրված մեկական ոսկեդրամները խոյակի դեր են կատարում: Ընծայագիրն ուղղված է ձեռագրի ստացող Եսայի Նչեցուն.

12ա Տէր իմ Քրիստոս Փրկիչ մարդկան,
Պետ հովուքեան կարգիս ամման,
Որ մեզ զընորհս Քո շղթան,
Հեղեր արհմեալոյ յախտեան:
Դու ես զպննողս Քո բանին,
Եւ ըզստացող այսմ տառի
Ըզեսայի սուրբ բաբունի
Ընգալ ի փառսդ հայրենի, ամէն³⁸:

Ընծայական-խորանը 12-րդ դարի կիրիկյան մանրանկարչության նորամուծություններից էր, որտեղ համաձայնության կանոններն ամփոփող խորաններին հաջորդում էր ձեռագրի պատվիրատուին նվիրված խորանաձև ևս մեկ էջ: 13-րդ դարի առաջին կեսին Հռոմկլայի դպրոցի ձեռագրերում զարգանում է այդ կառուցվածքը, որտեղ ընծայագրին հատկացվում էր արդեն երկու էջ³⁹: Դրանք հայտնվում են հիմնականում Կոստանդին կաթողիկոսի անմիջական հրամանով և հովանավորության ստեղծված ձեռագրերում՝ գրված արքայական ընտանիքի անդամների կամ բարձր դասի հոգևորականների համար⁴⁰: Պահպանված առաջին օրինակը 1248 թ. Բարձրբերդի Ավետարանում է⁴¹: Ընծայականները

³⁷ Վնտկ. 1917 ձեռագրից անհրաժեշտ էջերի թվային տարբերակը շնորհակալությամբ ստացել ենք Վենետիկի Միխայիլյան միաբանության անդամ Հայր Վահան Օհանյանից:

³⁸ Նույն տեղում, էջ 136, 378:

³⁹ S. Der-Nersessian, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, Washington, 1963, p. 22, նույնի՝ *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1973, p. 8, 28, B. Казарян, С. Манукян, укл., соч., с. 90, 103, I. Rapti, « La voix des donateurs: pages de dédicaces dans les manuscrits arméniens de Cilicie », *Donation et donateurs dans le monde byzantin*, ed. by J.-M. Spieker, É. Yota, Paris, 2012, pp. 309–326.

⁴⁰ Գ. Յովսեփեան, «Կոստանդին Ա. կաթողիկոս», *Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակույթի պատմութեան*, պրակ Բ, Նիւ Եորք, 1943, էջ 6-44:

⁴¹ Անթիլիաս, ձեռ. Հ^մ 8, տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց, Բ. Բ. կազմեց՝ Ար. արք. Սիրմէան, Հալէպ, 1936, էջ 6ա, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց՝ Ա. վրդ. Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 90, S. Agémian, *Manuscripts Arméniens Enluminés du Catholicossat de Cilicie*, Antelias-Liban, 1991, pp. 13-14, Pl. E:

Կիլիկիայում գրվում էին երկաթագիր, ոսկե խորքի վրա կապույտ գույնով կամ հակառակ համադրությամբ՝ հաճախ կարմիր տողերի արանքում: Այդ խորաններին բնորոշ էր ճոխ ու նրբագեղ հարդարանքը: Փաստորեն, կիլիկյան մանրանկարչությունը հատուկ այս ձևավորումը տեղ է գտել գլաձորյան երկու ձեռագրերում: Համեմատելով շուրջ տասներկու ընծայագրերի չափածո հիշատակարանները, տեսնում ենք, որ դրանք հիմնականում կաղապարային որոշակի ձև են ունեցել, որ փոխանցվել է ձեռագրից ձեռագիր (աղյուսակ 2): Դրանցում կիրառվող «պճնող» բառը վերաբերում է ձեռագրի պատվիրատուին և կիրառվել է այն իմաստով, որ այդ անձն է հոգ տարել ձեռագրի նկարազարդման համար⁴²:

Կիլիկյան ձեռագրերից փոխառված մանրամասն է մանրանկարներում ոսկեդրամների պատկերումը: Կիլիկիայի նկարիչների համար հատուկ նշանակություն է ունեցել հենց ոսկեդրամ պատկերելը, որի պատճառաբանությունն, ըստ Ալեքսանդր Հակոբյանի և Իսեսա Դանիելյանի, հիմնավորվում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքով», որը Կիլիկյան Հայաստանում 13-րդ դարում օրենքի ուժ ստացավ: Դրա նախավերջին՝ «նվիրատվությունների մասին» հոդվածում, Մխիթար Գոշի խորհրդապաշտական վերլուծության համաձայն՝ ոսկե դահեկանը Քրիստոսի աստվածության խորհրդանիշն է⁴³: Հենց այս գաղափարն է մղել կիլիկյան նկարիչներին ձեռագրերում վերարտադրել իրական ոսկեդրամների պատկերներ⁴⁴:

13-րդ դարի կեսին կիլիկյան ձեռագրերում հայտնված այս նորարարությունը արտացոլվել է Վայոց ձորի մի շարք՝ հիմնականում Օրբելյան իշխանների պատվիրած ձեռագրերում, մի քանիսը՝ վարդապետ Պողոսի գործակցությամբ, ինչպես վերոնշյալ գլաձորյան երկու ընծայական-խորաններում:

1302 թ. Նորավանքում Հովհաննես Օրբելի գրած և Մոմիկի նկարազարդած Ստեփանոս Օրբելյանի Ավետարանը (ՄՄ 6792) Վայոց ձորից պահպանված առաջին ձեռագիրն է ոսկեդրամների պատկերներով: Դրանք երեքն են՝ տեղադրված Հովհաննես ավետարանի տիտղոսաթերթի գլխազարդի մեջ (15ա): Այս Ավետարանի ձևավորումն, ընդհանրապես, կապվում է կիլիկյան մանրանկարչական ավանդույթների՝ վայոցձորյան գեղարվեստական համակարգ ներթափանցելու սկզբնական շրջանի հետ⁴⁵:

⁴² Ա. Գևորգյան, «Սարգիս ծաղկող (ԺԳ դ.)», *ԲՄ*, 10, 1971, էջ 152:

⁴³ А. Акопян, И. Даниелян, «Идеи, монеты и художники: об изображении монет и печатей в армянских рукописях в XIII-XVI вв.», *Graphosphera*, vol. 3 (2), Москва, 2023, с. 248-249, 254.

⁴⁴ Նույն տեղում, էջ 255:

⁴⁵ Կիլիկիայի մանրանկարչության հետ են աղերսվում 1302 թ. Ավետարանի սկզբնաթերթերի բոլոր տարրերի ոսկով ուրվագծումը, խառնվ պսակված աչ լուսանցազարդը՝ բաղկացած իրար վրա հավաքված սրտաձև զարդամոտիվներից, Լազարդի առաջին անկյունների նախազարդերը և այլն, տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 56-58:

Անթիլիաս, ձեռ. Հ ^մ 8, 1248 թ., Ավ., Կիլիկիա	Զեսթեր Բիթի, ձեռ. Հ ^մ 558, 13-րդ դ., Ավ., Կիլիկիա	Վնակ. ձեռ. Հ ^մ 1917, 1307 թ., Ավ., Գլաձոր	ՄՄ 9150, 1314 թ., Ավ., Գլաձոր
Ով յանսկիզբն ծոցդ բան, Որ ծաղկեցար յազգս մարդկան, Եւ մեզ շնորհս քո շղթան, Հեղեր արհնեալդ յավիտեան, Արդ առեալ զքոյս քեզ տամ, Բարձեալ ի ձեռս առաջի գամ, Ընկալ զնուէրս բարեխնամ, Եւ յիս հայեա Տէր հաշտ ակամբ*, Տէր իմ Յիսուս Փրկիչ մարդկան Պետ հովութեան կարգիս աւծման Որ զայս մատեան Աւետարան Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան Ահա զքոյս առեալ քեզ տամ, Բարձեալ ի ձեռս առաջի գամ Առ զայս նուէր Սուրբ բարէխնամ Եւ յիս հայեայ Տէր հաշտակամ: Ով յանսկիզբն ծոցդ բան Նոյն եւ ծաղկեալ յազգս մարդկան Որ մեզ զշնորհս քո շրթան Հեղեր արհնեալդ յաւիտեան Դու զպճնողս քո բանի Եւ զարդարող այսմ տառի Զտէր Ստեփանոս հովիւ բարի Նստոյ աթոռ ընդ Պետրոսի:	Տէր իմ Քրիստոս Փրկիչ մարդկան, Պետ հովութեան կարգիս աւծման Որ զայս մատեան Աւետարան Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան Ահա զքոյս առեալ քեզ տամ, Բարձեալ ի ձեռս առաջի գամ Առ զայս նուէր Սուրբ բարէխնամ Եւ յիս հայեայ Տէր հաշտակամ: Ով յանսկիզբն ծոցդ բան Նոյն եւ ծաղկեալ յազգս մարդկան Որ մեզ զշնորհս քո շրթան Հեղեր արհնեալդ յաւիտեան Դու զպճնողս քո բանի Եւ զարդարող այսմ տառի Զտէր Կոստանդին հովիւ բարի Յաթոռ նստոյ ընդ Պետրոսի:	Տէր իմ Քրիստոս Փրկիչ մարդկան, Պետ հովութեան կարգիս աւծման, Որ մեզ զշնորհս Քո շրթան, Հեղեր արհնեալդ յաւիտեան: Դու ես զպճնողս քո բանի Եւ ըստացող այսմ տառի Ըզենայի սուրբ բարեունի Ընգալ ի փառս հայրենի, ամէն:	Ով յանսկիզբն ծոցդ բան, Նոյնդ ծաղկեալ յազգ մարդկան Որ զայսմ ատեն Աւետարան, Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան, Ահա զքոյս առեալ քեզ տամ, Բարձեալ ի ձեռ առաջի գամ.// Առ զայս նուէրս բարէխնամբ Եւ յիս հայեա՝ Տէր հաշտ ակամբ Դու զպճնողս քո բանի, Եւ զստացող այսմ տառի՝ Զտէր Ստ[ե]փանո[ս հո]վիւ բարի, հայրենի:

* Ընծայական-հիշատակարանների (թվով 12) համեմատությունը ցույց տվեց, որ «հաշտ ակամբ» (հաշտ աշխով) եզրը կիրառվել է միայն 1248 թ. Բարձրբերդի Ավետարանում (Անթիլիաս, ձեռ. Հ^մ 8) և 1314 թ. Գլաձորում ընդօրինակված ձեռագրում (ՄՄ 9150): Մյուս օրինակներում կիրառվել է «հաշտական» (հաշտություն կամեցող) ձևը: Այդ կաղապարային բառի մասին տե՛ս նաև, **Խ. Հարությունյան**, «Հաշտ ակա՛մբ, թե՛ հաշտա-կամ», Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն (Թ-ԺԵ. դարեր), գիրք Ա, Երևան, 2022, էջ 226-227:

Հովհաննես Օրբելի պատվիրած 1307-1331 թթ. Ավետարանում (ծանոթ. 12) ոսկեգօծ երկու կնիք հայտնվում է Մատթեոսի անվանաթերթի ճակատազարդի ներքևում (14ա): Աջակողմյանի ներսում բոլորածև գրված է «Տ[Է]Ր ՕՐ-ՊԷԼ ԻՈՎԱ[ՆԷ]», իսկ կենտրոնական մասի փոքր բոլորակի մեջ՝ իրար տակ «Յ[ԻՍՈՒ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ»: Զախակողմյան կնիքը և նրա վրայի գրությունը քայքայված են, բայց նշմարելի են «ԹԵ» տառերը (ԲԻԻՐԹԵ՛Ն)¹: Նշենք, որ ձեռագիրը գրվել է Բուրթեյ իշխանի համար:

Հիշատակված ձեռագրերի դեպքում ոսկեդրամները նկարվել են ոչ թե անմիջապես իրական դրամներից, ինչպես կիլիկյան ձեռագրերում, այլ արտանկարվել են մանրանկարներից, ինչի մասին վկայում են դրամների և նմանակած կնիքների կոպիտ մշակումները և սխալ վերարտադրությունը²:

Ոսկեդրամների երեք պատկեր առկա է Հովհաննես Օրբելի պատվիրած 1300 թ. ձեռագրի (Նոր Զուղա, 477/35) Մատթեոսի Ավետարանի տիտղոսաթերթում (16ա)³: Դրանք արդեն իրական դրամներից արված ընդօրինակություններ են և ավելացվել են 1323 թ. հետո⁴: Նոր Զուղայի ձեռագրացուցակի նկարագրության համաձայն՝ Ավետարանի ստեղծման վայրը Տաթևի վանքն է⁵: Դա պատճառ է դարձել, որ ձեռագիրը հաճախ վերագրեն Տաթևի մանրանկարչական դպրոցին: Սակայն, ինչպես Հ. Քյուրտյանն է նշում, Ավետարանը նվիրվել է Տաթևի վանքին, գրվել՝ հավանաբար Գլաձորում⁶: Ձեռագրի հիշատակարանում Հովհաննես Օրբելը ուղղակի պատգամում է զգուշությամբ պահել Ավետարանը և այն չհանել Տաթևի Ս. եկեղեցուց. «...Ի վերայ այս ամենայնի պատուի տամք ձեզ զկնի եկեղոցդ մեծաւ զգուշութեամբ պահել զսուրբ Աւետարանս եւ չհանել զսա ի սուրբ եկեղեցոյս Տաթևոյ...ԹՎԻՄ ԶԽԹ (1300) Էր, ես նուսատ Աւրպել Իովանէ Իմու ձեռամբս գրեցի զյիշատակարանս» (317ա-բ):

¹ Գրությունները վերծանել է Կ. Մաթևոսյանը, տե՛ս Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017, էջ 215:

² И. Акопян, И. Даниелян, укр. соч., с. 229-234.

³ Շնորհակալություն եմք հայտնում Հրայր Բագե Խաչեղյանին և Ինեսսա Դանիելյանին այս ձեռագրից որոշ էջերի թվային տարբերակը արամադրելու համար:

⁴ Տիտղոսաթերթի ոսկեդրամների պատկերների ֆնությամբ պարզվել է, որ դրանցից երկուսը վերարտադրում են Աբու-Սաիդի մետաղադրամների այն տեսակը, որ սկսել է հատվել 1323 թ. սկսած և հետևաբար, դրանց արտանկարումը ձեռագրում հետագա լրացման արդյունք է, И. Акопян, И. Даниелян, укр. соч., с. 235-237:

⁵ Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., կազմեց՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 51:

⁶ Յ. Քիւրտեան, «Օրբելեան ձեռագիր մը 1300-էն», Հասկ հայագիտական տարեգիրք, 1949-1950, Բ, էջ 112, A. Harutyunyan, The Spiritual Citadel of Syunik: Tatev. An illustrated Investigation, Yerevan, 2024, pp. 154-155:

Ի մի բերելով Հովհաննես Օրբելի գրչագրած կամ պատվիրած ձեռագրերը, տեսնում ենք, որ դրանք կապվում են Նորավանքի, Գլաձորի, մեկն էլ՝ Վերին Նորավանքի հետ: Գիտենք, որ նա ուսանել է Գլաձորում՝ Եսայի Նչեցու մոտ: Հովհաննես Օրբելը, որպես Ստեփանոս Օրբելյանի կանխակոչված հաջորդ (1300-1324 թթ.) և օգնական, նրա հետ բնակվում էր մետրոպոլիտների ավտո-ռանիստ Նորավանքում, որտեղ նրա պատվերով 1302 թ. գրեց մի Ավետարան (ՄՄ 6792): Մենք հավանական ենք համարում, որ 1300 թ. ձեռագիրը գրվել է Նորավանքում⁷, նկարազարդվել՝ Նորավանքում կամ Գլաձորում, հետո նվիրվել Տաթևի վանքին⁸: Իսկ ոսկեդրամների պատկերները, թերևս, լրացվել են Տաթևի վանքում:

Հովհաննես Օրբելի 1300 թ. Ավետարանն իր հարուստ ձևավորմամբ, գույ-ների ու մոտիվների ընտրությամբ, ոսկու նուրբ գործածությամբ առնչվում է կի-լիկյան ձեռագրերին⁹: Դրա համաձայնության կանոնների և անվանաթերթերի զարդանկարչությունը սերտորեն աղերսվում է Պողոսի գրչագրած, Թորոս Տա-րոնացու նկարազարդած 1307 թ. Ավետարանին (Վնտկ. 1917): Այս երկու ձե-ռագրում էլ ընդօրինակություններ կան՝ շատ մոտ Դրազարկի վանքում (Գիլի-կիա) Թորոս փիլիսոփայի ծաղկած 1290 թ. Ավետարանին¹⁰: Թորոս փիլիսոփան 1290 թ. մեկ այլ ձեռագրի հիշատակարանում (ՄՄ 5736, 311բ-312ա) նշում է, որ իր հայրը ծնունդով Տարոնից է և նրա հիշատակի համար է ինքը գրել ու նկարազարդել Ավետարանը և նվեր մատուցել Մշո Ս. Կարապետ վանքին: Հաշ-վի առնենք, որ Գլաձորի համալսարանի ուսումնականներից շատերը Տարոնից էին, նաև կիլիկյան ձեռագրերի նվիրաբերման դեպքերն էին տարածված 14-րդ դարում: Հետևապես ենթադրելի է, որ Թորոս փիլիսոփայի այս ձեռագիրը կամ դրա օրինակով ստեղծված մի ուրիշ մատյան նախօրինակ է հանդիսացել Հով-հաննես Օրբելի 1300 թ. և Եսայի Նչեցու 1307 թ. Ավետարանների համար: Այդ փաստի օգտին է վկայում այժմ անհայտ տեղորոշմամբ ձեռագրի հիշատակա-

⁷ Ձեռագրի կատարման վայրը Նորավանքն են համարում նաև Թ. Մեթյունն ու Ա. Սանջյանը, տե՛ս, **T. Mathews, A. Sanjian, Armenian Gospel Iconography, The tradition of the Gladzor Gospel**, Washington, 1991, p. 62:

⁸ Հիշենք, որ իր արքունակության շրջանում Ստեփանոս Օրբելյանը 1287 թ. միավորեց և իր իշխանության տակ առավ Տաթևի և Նորավանքի արքունիքը, 1295 թ. հովանավորեց Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցու կառուցումը:

⁹ Այս ձեռագրին և կիլիկյան մանրանկարչության հետ ունեցած առնչություններին կանդա-ղաունանք առանձին հոդվածով:

¹⁰ Սանկտ-Պետերբուրգ, Էմիսաթ, V3-835, տե՛ս **Т. Измайлова, «Киликийская рукопись 1290 года и ее мастер Торос Философ», Сообщения Государственного Эрмитажа, XXIII, Ленинград, 1962, с. 45-49, նույնի՝ Армянские иллюстрированные рукописи Госу-дарственного Эрмитажа, каталог, Ленинград, 1969, с. 110-114, S. Der-Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, Antiliyas, 1986, p. 73:**

րանն այն մասին, որ Ստեփանոս Տարսայիճը 1331 թ. ստացել է Թորոս փիլիսոփայի նկարազարդած մի Ավետարան. «[Աւետարանս] ի ձեռն ուրումն եբեր յաշխարհէն Հայոց, գրեալ ոսկեզաւծ որակաւ ի Դրագարկն, ձեռամբ Թորոս փիլիսոփային, զոր տեսեալ տեսոն Ստեփաննոսի Տարսայիճ՝ հզաւր և իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայոյ տիեզերաբարոզ լուսաւորչին... տէր և վերատեսուչ գահերէց և գլուխ արհիերից արքունոցս Սիւնեաց Տաթևոյ եւ Նորավանից եւ Յախացաբոյ... ուրախ եղել իբրեւ ընծայ ի վերուստ առաքեալ...»¹¹:

Այսպիսով, 14-րդ դարում Վայոց ձորի նկարիչները տարբեր ուղիներով առնչվում էին կիլիկյան պատկերազարդ ձեռագրերին, փոխառում ու կիրառում կիլիկյան մանրանկարչության ձեռքբերումները: Այդ հաղորդակցմանը օժանդակեցին նաև հատկապես Գլաձորում կրթվող կիլիկյան վարպետները, որոնցից գեղազիր-զարդանկարիչ Պողոս Ակներցին ստեղծագործական վերջին շրջանն անցկացրեց Վայոցձորյան մի շարք վանքերում:

LUSINE BARSEGHYAN

POGHOS OF CILICIA AND REFLECTION OF CILICIAN MINIATURE TRADITIONS IN THE MANUSCRIPTS OF VAYOTS' DZOR (13TH-14TH CENTURIES)

Keywords: Poghos of Cilicia, Poghos of Akner, Cilicia, Vayots' dzor, Gladzor, dedicatory, gold coin, miniature, decoration.

From the 14th century onward, the artistic principles of Cilician miniature painting were reflected in certain manuscripts from Vayots' Dzor. Cilician manuscripts for imitation appeared in Vayots' Dzor both through donations and thanks to scholars who came from Cilicia to Gladzor University, among whom was the scribe-miniaturist Poghos of Cilicia (or Poghos of Akner). The earliest mention of Poghos's presence in Vayots' Dzor dates to 1307, when he copied manuscripts in Gladzor and Noravank'. In Gladzor, he received the rank of vardapet from Esayi Nch'ets'i. In 1314, he copied and illuminated a Gospel commissioned by Tarsayich Orbelean. He also worked in the monasteries Arates and Hermon.

The influence of Cilician miniature painting in manuscripts from both Gladzor University and other scriptoria of Vayots' Dzor is found primarily in decorative elements borrowed from Cilician illuminations which include the dedicatory pages

¹¹ Հայերեն ձեռագրերի հիշ., ԺԴ, Բ, էջ 98-99:

in the shape of canon-tables devoted to the commissioners and depictions of gold coins.

The article surveys nine manuscripts related to Poghos's name (M185, M4096, M4171, M4446, M5563, M7842, V1917, Beinecke lib. Arm MS 3, Arak'elots' monastery of Mush, 14) and presents some observations on them. It is possible to assert that he is the scribe and one of the illustrators of MS W460.

ЛУСИНЕ БАРСЕГЯН

ПОГОС КИЛИКЕЦИ И ОТРАЖЕНИЕ ТРАДИЦИЙ КИЛИКИЙСКОЙ МИНИАТЮРЫ В РУКОПИСЯХ ВАЙОЦ ДЗОРА (13-14 ВВ.)

Ключевые слова: Погос Киликеци, Погос Акнерци, Киликия, Вайоц дзор, Гладзор, золотая монета, посвящение, миниатюра, убранство.

Начиная с XIV века художественные принципы киликийской миниатюрной живописи нашли отражение в ряде рукописей из Вайоц Дзора. Киликийские рукописи, предназначенные для копирования, появлялись в Вайоц Дзоре как в результате пожертвований, так и благодаря ученым, прибывшим из Киликии в Гладзорский университет, среди которых был писец-миниатюрист Погос Киликеци или Акнерци. Самое раннее упоминание о пребывании Погоса в Вайоц Дзоре относится к 1307 году, когда он переписывал рукописи в Гладзоре и Нораванке. В Гладзоре он получил степень вардапета от Есаи Нчеци. В 1314 году он переписал и проиллюстрировал Евангелие, заказанное Тарсаичем Орбеляном. Он также работал в монастырях Аратес и Гермон.

Влияние киликийской миниатюрной живописи в рукописях как Гладзорского университета, так и других скрипториев Вайоц Дзора проявляется главным образом в декоративных элементах, заимствованных из киликийских иллюстраций (в том числе в оформленных в виде канонической таблицы посвящений заказчикам и изображения золотых монет). В статье дается обзор и некоторые наблюдения над декором девяти рукописей (M185, M4096, M4171, M4446, M5563, M7842, V1917, Библ. Бейнеке, Arm. MS 3, Монастырь Апостолов Муша, 14), связанных с именем Погоса. Есть основания утверждать, что он также является писцом и одним из иллюстраторов рукописи W 460.